ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «21» մայիսի 2026թ № 1450-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N 442-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման հավելվածի 41.1-ին կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով համապատասխանության գնահատման մարմինների նշանակման համար ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության, նշանակման ոլորտի սահմանման, ինչպես նաև նշանակման կասեցման կամ չեղյալ հայտարարման համար ստեղծված աշխատանքային խմբի 2026 թվականի մայիսի 21-ի աշխատանքային հանդիպման արձանագրությունը՝

Հրամայում եմ

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2025 թվականի հունվարի 30-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության փորձարկման լաբորատորիային Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) և Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 442-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի վերնագրում և ամբողջ տեքստում «փորձարկման լաբորատորիային» բառերը փոխարինել «լաբորատոր փորձարկումների կենտրոնին» բառերով,

2) Հրամանի 1-ին կետում «N 1, N 2 և N 3 հավելվածներով սահմանված հավատարմագրման ոլորտում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի, ցուցանիշների և համապատասխան տեխնիկական կանոնակարգերով սահմանված փորձարկման (այդ թվում՝ նմուշառման) մեթոդը սահմանող փաստաթղթերի նշագրերի» բառերը փոխարինել «անբաժանելի մաս հանդիսացող հավատարմագրման վկայագրի N 1, N 2 և N 3 հավելվածներում ամրագրված հավատարմագրման ոլորտի շրջանակներում ընդգրկված արտադրանքի/օբյեկտի անվանման, Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) ծածկագրի, արտադրանքի/օբյեկտի նորմատիվ իրավական ակտի և/կամ ստանդարտացման փաստաթղթի նշագրի և/կամ անվանման, ցուցանիշների անվանման, այդ թվում՝ նմուշառման, փորձարկման, այդ թվում՝ նմուշառման, մեթոդը սահմանող փաստաթղթի նշագրի, անվանման, կետի» բառերով,

3) Հրամանի 5-րդ կետում «նկատմամբ կատարման» բառերը փոխարինել «կատարման նկատմամբ» բառերով,

4) Հրամանի հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի 6-րդ կետում «:» կետադրական նշանը փոխարինել «,» կետադրական նշանով,

5) Հրամանի հավելվածի Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերի ցանկը լրացնել նոր՝ 7-րդ կետով. «7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի օգոստոսի 10-ի «Ցեմենտներին, ցեմենտային կլինկերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» ի N 1136-Ն որոշում:»:

2026-06-12 09:01:37 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ